

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2022-4-1-Ա

ք. Երևան

24.03.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի մարտի 24-ի նիստում քննարկեց 2020 թվականի մարտի 17-ին արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված՝ «Dochirnie pidpriemstvo "Kondyterska korporatsiia "Roshen"» ընկերության (Elektrykiv vul., 26/9 Kyiv 04176, UA) «CoffeeLike» (IR1217540) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մականշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող շփոթելու աստիճան նման «ԼԱՅՔ ЛАЙК LIKE» (Անդրանիկ Թոնյան, Երևան, Մ. Խորենացու 47/1, քն. 51, AM N 21595, 01.07.2014) բառային ապրանքային նշանի առկայության պատճառով: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 130-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման են համարվում ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում նման տարր է հանդիսանում «LIKE» բառը:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանին իրավական պահպանություն տալու մասին, քանի որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր

իրավասության դատարանի 04.02.2021թ-ի կայացրած մերժման հիմք հանդիսացող №21595 «ЛУЗФ ЛАЙК LIKE» ապրանքային նշանի գրանցումը չօգտագործման պատճառով ամբողջությամբ չեղյալ ճանաչելու մասին որոշումը (գործ թիվ ԵԴ/33735/02/19) օրինական ուժի մեջ է մտել:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված «CoffeeLike» (IR1217540) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանին իրավական պահպանություն տալ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

**ՆԱԽԱԳԱՀ**

**ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ**